

ԼՈՒՅՍ

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Մշակութային և հասարակական ամսագիր

Հայոց Ցեղասպանության 98-րդ տարելիցի ոգեկոչում Թուրքիայի Կ. Պոլիս քաղաքում



Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Իրանահայ Համայնք.....1
- 2- Հայաստան.....3
- 3- Արցախ.....5
- 4- Արեւմտյան Հայաստան.....6
- 5- Միջազգային.....11
- 6- Հասարակական.....15
- 7- Մշակույթ25
- 8- Խոհեր.....29
- 9- Գծանկարչություն.....29
- 10- Հայերեն-պարսկերեն առածանի.....29

Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր.1-3



Շապիկի առաջին էջում՝ Շուշիի ազատագրման հերոս Գեներալ Արկադի Տեր Թադեոսյան՝ Կոմանդոս

Վերջին էջում՝ Քյամարայի տոհմածառ (Մ. Մարտիրոսյան)

Համար 177, Ապրիլ 2013 թ.

No. 177, April 2013

ماهنامه لویس - شماره ۱۷۷ اردیبهشت ماه ۱۳۹۲

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատվածառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

Մենք 1915-ի կոտորածներից հետո խնդիր չենք լուծել ու վախում ենք, որ չթաղված դիակները կլցվեն մեզ վրա. թուրք գործիչ



Ապրիլ 17, 2013 | 08:08

Թուրք գործիչ, ազգային փոքրամասնությունների հարցերով մասնագետ, քրդական հարցի կարգավորման համար Էրդողանի կողմից «Իմաստունների հանձնաժողովում» ընդգրկված Բասքըն Օրանի՝ «1915-ի հայկական կոտորածներից հետո Թուրքիայում ոչ մի հարց չի լուծվել» հայտարարությունը խիստ արձագանք է գտել թուրք ազգայնականների շրջանում:

Թուրքական «Հաբերթուրք» հեռուստաընկերության «Խոսքը քեզ մոտ է» հաղորդման ժամանակ Բասքըն Օրանը կրկնել է Իզմիրում արած իր հայտարարությունը՝ նշելով, թե տխրեցնող է, որ պետականամետ մտածելակերպով քաղաքական գործիչ եւ կուսակցապետ Դելլեթ Բահչելին իրեն դավաճան է անվանել:

Բասքըն Օրանը, անդրադառնալով Թուրքիայի խնդիրներին, կրկնել է օրեր առաջ Իզմիրում մի միջոցառման ժամանակ արած հայտարարությունը. «1915-ի հայկական կոտորածներից հետո մենք ոչ մի հարց չենք լուծել եւ բոլոր դիակները լցրել ենք դարակները: Հիմա դրանք դեպի մեզ են գալիս եւ քանի որ մենք դիակները չենք թաղել, մենք վախենում ենք, որ չթաղված դիակները կլցվեն մեզ վրա»:

Բասքըն Օրանը պնդել է, թե պառակտիչ է, երբ թուրք ինքնությունը մյուսներից վեր է դասվում: «Երբ ասում ենք ազգային պետություն, խնդիր չկա, իսկ երբ՝ ազգ-պետություն՝ դա դառնում է Աստծո պատիժը մեր գլխին: Պետք է առաջնային լինի ոչ թե թուրք ինքնությունը, այլ Թուրքիացի ինքնությունը, քանի որ երբ երկրում ապրող մյուս էթնիկ խմբերին պարտադրում ես ասիմիլիացիա, դա նրանց կողմից չի ընդունվում եւ այն դառնում է պառակտիչ», - ասել է Բասքըն Օրանը:

[NEWS.am](#)-ը, հիշեցնում է, որ Բասքըն Օրանը 2008-ին Թուրքիայում [«Ներեցեք մեզ, հայեր»](#) ինտերնետ ստորագրահավաքի կազմակերպիչներից էր: «Ներեցեք մեզ, հայեր» ակցիային ինտերնետով միացան Թուրքիայի ավելի քան 30 հազար քաղաքացիներ:

Իրանահայ Համայնք

**Դոկտոր Մեսրոպ Բալայեանը
ոչ ես է**



09/04/2013 *Իրանահայեր Լրատու Ցանց*

Խորը վշտով համակլած գուժում ենք բազմավաստակ ուսուցիչ, հոգեբան, դասախօս, ազգային-հասարակական եւ կրթական գործիչ՝ դոկտոր պրոֆեսոր Մեսրոպ Բալայեանի մահը, որ տեղի ունեցաւ թուրքական ապրիլի 3-ին, Նոր Ջուղայում:

Սպահանի Հայոց Թեմի ազգային բոլոր մարմինները խորապէս սգում եւ վշտակցում են հանգուցեալի ընտանիքին, համայն իրանահայութեանը, ուսանողներին, գործակիցներին ու Իրանի ժողովրդին, եւ առ բարձրեալն Աստուած հայցում նրա հոգուն խաղաղութիւն:

Հոգեհանգստեան եւ թաղման արարողութիւնը տեղի է ունենալու յառաջիկայ երկուշաբթի՝ ապրիլի 8-ին, յետմիջօրէի ժամը 3-ին Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում:

Դիւան Ազգային Առաջնորդարանի
Սպահանի Հայոց Թեմի

Լույս ամսագիրը խորապէս վշտակցում է դր. Մեսրոպ Բալայեանի վախճանման կապակցութեամբ:

**Նոր Ջուղայի հայ համայնքն իր վերջին հրաժեշտը
ուեց բազմավաստակ հոգեբան-դասախօս եւ
ազգային-կրթական գործիչ դոկտոր-պրոֆեսոր
Մեսրոպ Բալայեանին**

Ալիկ Հինգշաբթի, 11 Ապրիլի 2013թ.

Թղթակից (Նոր Ջուղա) - Երկուշաբթի, ապրիլի 8-ին, Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցում, ներկայութեամբ՝ ազգային մարմինների ներկայացուցիչների, Սպահանի Պետական համալսարանի դասախօսների եւ ուսանողների ու հայ եւ պարսիկ հայրենակիցների, տեղի ունեցաւ նոյն համալսարանի բազմավաստակ հոգեբան-դասախօս եւ ազգային-կրթական գործիչ՝ դոկտոր-պրոֆեսոր Մեսրոպ Բալայեանի յուղարկատրութիւնը, որն իր մահկանացուն էր կնքել ապրիլի 3-ին՝ 90 տարեկան հասակում: Թաղման եկեղեցական արարողութիւնը կայացաւ կէսօրից յետոյ ժամը 3-ին՝ գլխաւորութեամբ Շահինշահի հայ համայնքի հոգեւոր հովիւ Ս. Անանիա վրդ. Գուճանեանի եւ մասնակցութեամբ Ս. Մեսրոպ քնն. Գալստանեանի ու դպրաց դասի:

Եկեղեցական կարգի աւարտին Ս. Անանիա վրդ. Գուճանեանը հանդէս եկաւ դամբանախօսութեամբ, որտեղ անդրադառնալով նաեւ հանգուցեալի կենսագրական գծերին՝ թեմակալ

առաջնորդ Ս. Քարգէն եպս. Չարեանի, ազգային մարմինների ու միութիւնների անունից ցաւակցական խօսք ուղղեց սգակիրներին:

Այնուհետեւ նորոգ հանգուցեալի դին տեղափոխեց եկեղեցու բակ, որտեղ կարճատեւ արարողութիւնից յետոյ՝ դամբանախօսութեամբ ելոյթ ունեցան նաեւ՝ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի ատենապետ Ջանսոն Աղաբաբայեանը՝ թեմի ազգային մարմինների եւ Սպահանի Պետական համալսարանի Մանկավարժութեան եւ հոգեբանութեան ֆակուլտետի դասախօս դոկտ. Նուրին՝ համալսարանի տնօրէնութեան անունից:



Այնուհետեւ դոկտ. Բալայեանի դին ամփոփուեց Նոր Ջուղայի հայոց ազգային գերեզմանատանը: Դոկտ. Մեսրոպ Բալայեանը ծնել էր 1923 թականին: Նրա հայրը եղել է Հայոց Ցեղասպանութիւնը վերապրածներից: Նա իր դոկտորի կոչումն ստացել է Ֆրանսիայի «Սորբոն» համալսարանի հոգեբանութեան ճիւղում, որից յետոյ՝ վերադառնալով Իրան՝ սկսել է աշխատել որպէս համալսարանի դասախօս: 1962 թականից ընտանեօք տեղափոխուել է Սպահան եւ աշխատանքի անցնել տեղի Պետական համալսարանի Մանկավարժութեան եւ հոգեբանութեան ֆակուլտետում՝ որպէս դասախօս եւ դեկան: Եղել է նաեւ նոյն համալսարանի Հայոց լեզվի եւ գրականութեան ամբիոնի դասախօս: Գիտական բեղուն գործունէութիւնից բացի՝ դոկտ. Բալայեանն աշխոյժ դերակատարութիւն է ունեցել Սպահանի հայոց թեմի ազգային եւ կրթական կեանքում: Հեղինակն է բազմաթիւ գրքերի, յօդածների եւ թարգմանութիւնների: Հանգիստ՝ բազմավաստակ ուսուցչի աճիւններին:

**Վաղաժամ մահացել է
Դր. Արամայիս Միրզախանյանը**


Ապրիլի 11-ին Շվեդիայում 71 տարեկան հասակում անժամանակ կյանքից հեռացավ մտավորական եւ հասարակական գործիչ Արամայիս Միրզախանյանը: Նա երկար տարիներ իր ազդու մասնակցությունն է բերել թե՛ Իրանում եւ թե՛ Եվրոպայում հայության ամենահոգող հարցերի շուրջ տարվող պայքարում: Նա ջերմեանող պաշտպանում եւ պայքարում էր Արցախի ազատագրական պայքարի վերջնական հաղթանակի, ինչպէս նաեւ հայրենիքի զարգացման եւ ժողովրդավարացման համար տարվող պայքարին:

Եվրոպայի Հայերի Համագումարը իր խոր ցավակցությունն է հայտնում Արամայիս Միրզախանյանի ընտանիքին, հարազատներին եւ ընկերներին:

Եվրոպայի Հայերի Համագումար
13 ապրիլ 2013

Լույս ամսագիրը խորապէս վշտակցում է Արամայիս Միրզախանյանի վախճանման կապակցութեամբ:

Արամայիս Միրզախանյանի Պայծառ Հիշատակին
Թվականին Ապրիլի 11-ին 70 տարեկան հասակում
կյանքից հեռացավ իրանահայ մտավորական,
հասարակական գործիչ և համալսարանի դասախոս
Արամայիս Միրզախանյանը:



Արամայիսը ծնվել էր Սպահանի երբեմնի հայաբնակ Փերիա գավառի Նամագերդ գյուղում, տարրական և միջնակարգ կրթությունը ստացել էր Նոր Ջուղայի հայոց դպրոցներում, այնուհետև ավարտել էր Երևանի պոլիտեխնիկական համալսարանը ստանալով էլեկտրոտեխնիկայի դոկտորական կոչում:

Տարիներ նույն համալսարանում դասավանդելուց հետո Արամայիս Միրզախանյանը 1979 թվին տիկնոջ Ջուրնդայի և դստեր Մանուշի հետ վերադառնում է Իրան և աշխատանքի է անցնում Սպահանի «Սանաթի» համալսարանում:

Այս, թեկուզ և ոչ այնքան երկարատև ժամանակաշրջանում նա ակտիվ մասնակցություն է բերում Նոր Ջուղայի և Շահինշահրի հայ հասարակական կյանքին, կատարելով կազմակերպչական ազդեցիկ դեր համայնքի մեջ ծավալված ժողովրդական շարժման, ժողովրդական Ժամանակավոր Կոմիտեի (ԺԺԿ), ինչպես նաև Իրանահայ Ազգային և Մշակութային Միության (ԻԱՄՄ) Նոր Ջուղայի մասնաճյուղի հիմնադրման գործում:

Այնուհետև քաղաքական պայմանների բերումով ընտանյոք մեկնում է արտասահման և աշխատանքի է անցնում Ստոկհոլմի «The Royal Institute of Technology» համալսարանում:

Հայրենասիրությունը և սեփական ժողովրդի ճակատագիրը Արամայիսի համար բարձրագույն և անսակարկ արժեքներ էին, որոնց հավատարիմ մնաց մինչև իր կյանքի վերջը: Նա տևաբար կապի մեջ էր Մայր Հայրենիքի հետ: Իր սովորած համալսարանում հիմնել էր գիտական լաբորատորյա և հաճախ էր այնտեղ լինում գիտական դասախոսություններ կարդալու:

Արամայիս Միրզախանյանը գործոն մասնակցություն ունեցավ նաև արցախյան ազատամարտի ընթացքում, նախաձեռնող հանդիսանալով Շվեդում մարդասիրական օգնության կազմակերպման և Արցախ փոխադրելու գործում:

Արամայիսը հայրենի ժողովրդի ապագան տեսնում էր արդար և ժողովրդավար պետության մեջ և վերջին շրջաններում խիստ անհանգստանում էր Հայաստանում տիրող քաղաքական-հասարակական հոռի երևույթներին ի

տես և իր հանդուգն ու անաչառ վերաբերմունքն էր արտահայտում բազմաթիվ հոդվածներով:

Նա ազնիվ էր և սկզբունքային: Նրա հզոր, տիտանական արտաքինի տակ բաբախում էր խիստ բարի և հուզառատ մի սիրտ: Նա ապրում էր բանաստեղծությամբ, զբաղվում էր գեղանկարչությամբ: Կարոտում էր իր ծննդավայր Նամագերդ Գյուղին:

Հարգանք նրա պայծառ հիշատակին և մխիթարություն նրա ընտանիքին, հարազատներին ու ընկերներին:

Նոր Ջուղայի և Շահինշահրի ընկերներ

Ի դիմաց

Ազատ Մաթյան

Նիկիտ Միրզայան

Զելվաջուկ գիւղի «Մենաւոր» Ս. Ամենափրկիչը

31/03/2013 Իրանահայեր Լրատու Ցանց



Ատրպատականի Հայոց Թեմի հոգևոր ու ազգային կառոյցների ուսումնասիրութեան շրջագծում, Հինգշաբթի 21 Մարտ 2013 թւի առաւօտուն, Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերպ. Տ. Գրիգոր Օ. Վրդ. Զիֆթճեանը հասաւ Սալմաստի Զելվաջուկ գիւղը, որտեղ բլրան լանջին գտնւում է Ս. Ամենափրկիչ ուխտատեղի եկեղեցին:

Իմացած լինելով որ գանձախոյզներ սկսել են փորել եկեղեցու Արեւելեան պատի տակը, հասնելու համար խորանի յատակին, որտեղ յոյս ունեն գտնել հայերի ձեռքով թաղւած գանձ, Առաջնորդը առաջնահերթութիւն տւեց սոյն եկեղեցուն...: Ստորեւ ներկայացնում ենք Թեմակալ Առաջնորդի տեղագրութիւնը, իր գրչով.

«Սալմաստից 15 քիլոմետր հարաւ-արեւելք գտնւում է Զելվաջուկ նախկին հայաբնակ գիւղը, որը այսօր քրդաբնակ է: Մահլամ գիւղից երկու ճանապարհ ունի: Մէկը գիւղի միջից, միւսը՝ Մահլամի հայոց հանգստարանի կողքին բացւած ջրանցքի կողքով: Մենք նախընտրեցինք Մահլամի միջի ճանապարհով բարձրանալ Զելվաջուկ, նկատի ունենալով որ միւսը «խաքի» ոչ-ասֆալթապատ ճանապարհ էր մեծ մասամբ:

Գիւղ չբարձրացած, 3 քիլոմետր հեռից բլրան լանջին երեւում է տուփի կերպով մի «մենաւոր» կառոյց, գիւղի տներից մի քիչ վերեւ, որը հայոց Ս. Ամենափրկիչ սրբատեղի եկեղեցին է, 18-րդ դարի կառոյց: Հողաշէն եւ փայտածածկ լինելով, դա մինչեւ այսօր չի՝ տարբերում շրջակայ տներից, որոնք եւս արտաքնասպէս յարդի ու ցեխի շաղկապով ծեփւած են: Աւելի նոր կառոյցներում օգտագործել է նաեւ աղիւս:

Ս. Ամենափրկիչը 7x8 մետր տարածքով եւ հողաշէն հաստանիստ պատերով ու 4.5 մետր բարձրութիւն ունեցող մի եկեղեցի է: Եկեղեցու դռան մուտքը մեկու կէս մետր բարձրութիւն ունի, ստիպելով այցելուներին խոնարհուելով մտնել սրբավայրը: Դռուի երկու կողերին եւ վերեւի մասը միակտուր երեք քարեր զետեղել են, ամրացնելու համար

հողաշեն եկեղեցու մուտքը: Ներսը լուսատուրում է արեւելքից կտուրի տակ բացած երկու 40x60 սմ. պատուհաններով, ինչպես նաև միւս երեք պատերի բարձր կետի վրայ գտնուող նոյն քան մեծությամբ մեկական պատուհաններով, որոնք բոլորն էլ, ինչպես դուռը, վերջին տարիներին նորոգած լինելով, այժմ երկաթեայ խաչանիշ փեղկեր ունեն: Այս վերանորոգութեան ընթացքում նաև եկեղեցու գետինը սալալայտակել է:

Եկեղեցին ունի խորանի բեմ, որի վրայ փայտեայ հին խորանի փոխարեն յարմարցել սեմենտից սարքած մի խորան, երեք փոքրիկ յարկերով: Բեմի վրայից երկու գերանասալներ բարձրանում են կտուր, պահելու համար տանիքի գերանների ծանրությունը: Կտուրը լցած հողի վրայ արդիական ծածկ է պատել, կառույցը պաշտպանելու համար փլուզումից: Եկեղեցու ներսի պատերը սպիտակացած են եւ ջուրի թափանցումից պաշտպանելու համար յատուկ իւղային ներկով ներկված:


Յաճախ վերանորոգւած եւ լաւ պահպանւած վիճակում գտնուող սոյն եկեղեցին դարձեալ վերանորոգութեան կարիք ունի, յատկապէս դրա արեւմտեան ճակատը, ուր տեղ-տեղ թափւել է յարդախառն ծեփը եւ պատճառ դարձել ջուրի թափանցումի:

Ատրպատականի Հայոց Թեմի անշարժ գոյքի եւ մշակութային ժառանգությունների սոյն աշխատանքը պիտի շարունակուի, յատկապէս օգտւելով եղանակի ջերմացումից եւ գարնանային ձիւնհալից:

Հայաստան

Ամոթ, շա՛տ ամոթ, ով ուզում է թող էլ ամոթը վերցնի իր վրա

«Սպարապետ Վազգեն Սարգսյանը, մեր գոհված»



տղաները այսպիսի Հայաստան չէին երագում, նրանց երագածը ազատ ու անկախ Հայաստանն էր»:

Եռաբլուրում **HayNews.am**-ի թղթակցի հետ զրույցում ասաց Վազգեն Սարգսյանի մայրը տիկին Գրետան:

«Մենք առայժմ անկախ չենք: Ժողովուրդը այդ անկախությունն ու ազատությունը չի գգում, քանի նրա սոցիալական ու տնտեսական վիճակն այդքան վատ է... Կոնկրետ իմ երագած Հայաստանը սա չէր: Ես ուզում եմ, որ ժողովուրդը ապրի խաղաղ, բարեկեցիկ, այլ ոչ թե այսպես մաքառելով,- ասաց տիկին Գրետան հավելելով,- Ապրում են ...և երկիրն էլ լքում են»: Սպարապետի մայրն արցունքն աչքերին նկատեց. «Այս տղաներին շիրիմներին նայում ես, ԵԿՄ-ի տղաներին, ովքեր կիսավիրավոր են, նրանք ուզում էին, որ մեր ժողովուրդը լավ ապրի: Բայց ոչ թե այսպես... թողն երկիրը, լքեն գնան»: Տիկին Գրետան նշեց, որ ամեն օր սրտի ցավով է լսում, որ այսքան մարդ է լքել Հայաստանը: «Ամոթ, շատ ամոթ, ով ուզում է թող էլ ամոթը վերցնի իր վրա», - եզրափակեց Սպարապետի մայրը: **HayNews.am**

Ցեղասպանության կանխարգելմանը նվիրված միջոցառում ՄԱԿ-ում

Ապրիլի 05, 2013



Ապրիլի 4-ին ՄԱԿ-ի կենտրոնատեղիում Հայաստանի մշտական ներկայացուցչության ու մի շարք հասարակական կազմակերպությունների հովանավորությամբ անցկացվել է ցեղասպանության կանխարգելմանը նվիրված գիտաժողով, որին մասնակցեցին անդամ պետությունների ներկայացուցիչներ, փորձագետներ ու մեծ թվով օտարերկրյա հյուրեր:

Բացման խոսքով հանդես է եկել ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան Կարեն Նազարյանը: ՀՀ դեսպանը նշել է, որ ցեղասպանության հանցագործությունը կրկնվում է աշխարհի տարբեր անկյուններում՝ ընդգծելով ցեղասպանության կանխարգելման եւ այդ հանցագործության պատժման գործում միջազգային համագործակցության կարևորությունը: Այս համատեքստում դեսպանն անդրադարձել է վերջերս ՄԱԿ-ի Սարդու իրավունքների խորհրդի կողմից Հայաստանի նախաձեռնությամբ ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ ընդունված բանաձեւին՝ կարևորելով ճշմարտության, արդարության վերականգնման, հատուցման եւ հանցագործների քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը եւ ընդգծելով կրթության, ներառյալ մարդու իրավունքների բնագավառում կրթական ծրագրերի կարևորությունը կանխարգելման հարցում:

Կարեն Նազարյանը խոսել է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման մասին՝ նշելով, որ այդ ուղղությամբ Հայաստանը շարունակելու է իր հետետղական քայլերը, եւ թուրքական կառավարությունը, թեեւ իր կողմից որդեգրած մերժողականությունը, վաղ թե ուշ ստիպված կլինի ընդունել ճշմարտությունը: ՄԱԿ-ում ՀՀ դեսպանը ողջունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչած բոլոր պետությունների եւ միջազգային կազմակերպությունների դիրքորոշումը, ինչպես նաև այն թուրք մտավորականների, ուսանողների ու քաղաքացիների կեցվածքը, ովքեր գիտակցում են ճանաչման ու դրա միջոցով այդ հանցագործության կանխարգելման կարևորությունը՝ սատար կանգնելով Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման պայքարին:

Օրվա բանախոսները, որոնց շարքում էին գիտնականներ, դասախոսներ եւ արվեստագետներ, ներկայացրել են իրենց ուսումնասիրություններն ու շեշտել նմանօրինակ միջոցառումների անցակցման կարևորությունը ցեղասպանությունների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացման առումով:

Միջոցառմանը նաև ցուցադրվել է Մայքլ Հակոբյանի՝ Խարբերդի ջարդերին անդրադարձող «Չայներ լճից» վավերագրական կինոնկարը, որը ներկայացրել է հայտնի կինոռեժիսոր, մեկնաբան Կառլա Կարապետյանը:

Մահացել է Արամայիս Սահակյանը



Մարտ 14, 2013

77 տարեկան հասակում, Երեւանի թիվ 8 հիվանդանոցում, երկարատեւ հիվանդությունից հետո մահացել է գրող, երգիծաբան, բանաստեղծ, հրապարակախոս Արամայիս Սահակյանը: Արամայիս Ադամի Սահակյան ծնվել է 1936 թվականին Արծվաշեն գյուղում: Ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվական ֆակուլտետը: Աշխատել է «Ավանգարդ» թերթում, «Գարուն» գրական ամսագրում ՀԼԿԵՄ Կենտկոմում, ՀԽՍՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեում: 1982-ից «Ոգնի» երգիծական հանդեսի գլխավոր խմբագիրն է: Նա մի շարք գրքերի հեղինակ է, որոնցից են «Միբո հասակ», «Մենք միասին ենք», «Աստղիկներ», «Ապրել եւ սիրել», «Երջանիկ եղեք», «Ես սիրում եմ ձեզ» եւ այլն: Արամայիս Սահակյանը նաև երգերի տեքստերի հեղինակ է, որի համար արժանացել է համամիութենական երաժշտական մրցույթի դափնեկրի կոչման: Նրա բանաստեղծությունները թարգմանվել են ՄՍՀՄ եւ արտասահմանյան բազմաթիվ լեզուներով: Արամայիս Սահակյանը լայն հանրությանը հայտնի է իր խմբագրած «Ոգնի» երգիծական շաբաթաթերթով, որը շարունակել է հրատարակել նաև ԽՍՀՄ փլուզումից հետո: Նա նաև աշխատել է Հանրային հեռուստաընկերությունում: Ընտրվել է նաև Հայաստանի ԱԺ պատգամավոր:

Թուրք գործարարներն այցելել են Ցեղասպանության հուշահամալիր եւ ծաղիկներ դրել

Ապրիլ 11, 2013

Երեւանում ապրիլի 8-9-ին տեղի ունեցած «Առեւտրային եւ տնտեսական հարաբերությունների հաստատում» թեմայով հայ եւ թուրք գործարար կանանց երկօրյա

ֆորումի ընթացքում թուրք գործարարներն այցելել են Հայոց ցեղասպանության հուշահամալիր եւ ծաղիկներ դրել:

Ինչպես տեղեկացնում է NEWS.am-ի թղթակիցը, թուրք գործարարները սկզբում այցելել են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, ուշադրությամբ լսել Ցեղասպանության մասին ներկայացվող տեղեկություններն ու ուսումնասիրել փաստա-վավերագրական նյութերը:



Թանգարանից դուրս գալուց հետո թուրք գործարարներն ուղղվել են Հայոց ցեղասպանության հուշահամալիր, ծաղիկներ դրել անմար կրակի մոտ եւ հարգել անմեղ զոհերի հիշատակը:

Նշենք, որ «Առեւտրային եւ տնտեսական հարաբերությունների հաստատում» թեմայով հայ եւ թուրք գործարար կանանց երկօրյա ֆորումը կազմակերպվել է «Կանանց ֆորում» հասարակական կազմակերպության եւ ԱՄՆ ՄԶԳ Ձեռնարկությունների զարգացման եւ շուկայի մրցունակության («Ի-Դի-Էմ-Մի») ծրագրի կողմից: Թուրքիայից եկած գործարարների հիմնական մասը եղել են Դիարբեքիից:

Նոր մանրամասներ Պռոշյանի գյուղապետի սպանության գործով



Ապրիլ 10, 2013 | 15:24

Ոստիկանությունը նոր մանրամասներ է հաղորդել Պռոշյանի գյուղապետ Հրաչ Մուրադյանի սպանության փաստով հարուցված քրեական գործի նախաքննությունից: Ոստիկանությունից NEWS.am-ին հայտնեցին, որ գործով կալանավորված Արայիկ Պետրոսյանի դեմքից եւ քթից, ինչպես նաև նրա կողմից դեպքի օրը շահագործված «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայի սրահից՝ առջեւի աջ կողմի մեջտեղի հենակի ներսի կողմից, առջեւի ձախ դռան շրջանակից եւ պաստառի ներսի կողմից, համեմատական

հետազոտության նպատակով խճուճների վրա վերցված նմուշներում դատաքիմիական փորձաքննությամբ հայտնաբերվել են կրակոցի արգասիքներ հանդիսացող անտիմոնի մետաղացման հետքեր:

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերով քննության վարչությունում քննվող քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Հիշեցնենք, որ ապրիլի 2-ի առավոտյան 9.00-ի սահմաններում Պոռշյանի գյուղապետարանի դիմաց հայտնաբերվել է Պոռշյանի գյուղապետ Հրաչ Մուրադյանի դին՝ աջ քունքի շրջանում հրազենային վնասվածքով: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով (սպանություն՝ անձի կամ նրա մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ) եւ 235-րդ հոդվածի 1-ի մասի (ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից եւ դրա փամփուշներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) հատկանիշներով: Տարածքում պարկուճներ չեն հայտնաբերվել, նշանակվել են մի շարք փորձաքննություններ, կատարվում է նախաքննություն: Ձերբակալվել են նույն գյուղի բնակիչներ Արայիկ եւ Արտակ Պետրոսյանների անունները, որպես հիմնական կասկածյալ, լրատվամիջոցներում շրջանառվում է գյուղապետի մրցակից Արթուր Մուրադյանի անունը: Ապրիլի 5-ին Արայիկ Պետրոսյանը կալանավորվել էր, իսկ քրեական գործով վարույթ իրականացնող մարմնի որոշման հիման վրա Արտակ Պետրոսյանը ազատվել է արգելանքից:

Փամփուշտ՝ Երեւան-Թեհրան չվերթի ուղևորի մոտ



Ապրիլ 09, 2013

Ապրիլի 6-ին, ժամը 18.55-ին, ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնում հաղորդում է ստացվել, որ Երեւան-Թեհրան չվերթի ուղևորի մոտ փամփուշտ է հայտնաբերվել:

Ոստիկանության լրատվության վարչությունից հայտնում են, թե պարզվել է, որ «Զվարթնոց» օդանավակայանի ավիացիոն անվտանգության հսկողության ծառայության աշխատակիցների կողմից Երեւան-Թեհրան չվերթի ուղևոր, ԻԻՀ քաղաքացի, 1990 թ. ծնված Հեսամ Բ-ի

ձեռքի պայուսակի զննության ժամանակ հայտնաբերվել է 7,62 մմ տրամաչափի փամփուշտ:

Հեսամ Բ.-ն «Զվարթնոց» օդանավակայանի հատուկ զննման գոտուց ժամը 19.45-ին բերման է ենթարկվել ոստիկանություն: Հայտնաբերվածն ուղարկվել է փորձաքննության: Հանգամանքները պարզվում են: Կատարվում է հետաքննություն

Արցախ

ԱՄՆ-ի Մեյն նահանգը ճանաչել է Լեռնային Ղարաբաղի անկախությունը

Ապրիլ 10, 2013



ԱՄՆ Մեյն նահանգի Սենատն ու ներկայացուցիչների պալատն, այսօր՝ ապրիլի 10-ին, համատեղ բանաձեւ են ընդունել, որով ճանաչել են Լեռնային Ղարաբաղի անկախությունը, հաղորդում է Armenian Weekly-ն:

Բանաձեւը կոչ է անում ԱՄՆ նախագահին եւ Կոնգրեսին «աջակցել ԼՂՀ-ի ժողովրդավարական անկախությունը» եւ նպաստել ԼՂՀ-ի կառուցողական ներգրավմանը միջազգային հանրության ջանքերի ոլորտ, մինչեւ ռազմակավարական կարեւորության այդ տարածաշրջանում երկարատեւ խաղաղության հաստատումը:

Բանաձեւի նախաձեռնողը կոնգրեսական Սքոթ Համանն է՝ Ներկայացուցիչների պալատի անդամներ Էնդրյու Գաթինի եւ Սարա Գիդեոնի աջակցությամբ:

Բանաձեւում, մասնավորապես, ասվում է, որ Լեռնային Ղարաբաղը անկլավ է Հարավային Կովկասում եւ հայկական պատմական տարածք, որի բնակչության մեծ մասը հայեր են: Բռնապետ Իոսիֆ Ստալինը 1921 թվականին Լեռնային Ղարաբաղը հանձնել է Խորհրդային Ադրբեջանի ենթակայությանը: 1988 թվականի փետրվարի 20-ին Ղարաբաղում ազգային ազատագրական շարժում սկսվեց, որը ոգևորեց ժողովրդին ողջ Խորհրդային Միությունում ընդդեմ բռնապետության եւ հանուն իրենց իրավունքների եւ ազատությունների՝ օգնելով ժողովրդավարության առաջընթացին ողջ աշխարհում:

1991 թվականի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի ընտրված մարմինը հայտարարեց ԼՂՀ-ի ստեղծման

մասին: 1991-ի դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղը համընդհանուր հանրաքվեով անկախացավ: Դրան ի պատասխան, Ադրբեջանը լայնամասշտաբ ռազմական ագրեսիա սկսեց ԼՂՀ-ի դեմ՝ նպատակ ունենալով ճնշել ազատագրական շարժումը ԼՂՀ-ում: Ագրեսիան ավարտվեց 1994-ին հրադադարի համաձայնագիր կնքելով:

ԼՂՀ-ն ժողովրդավարական պետություն է կառուցել՝ ազատ շուկայական հարաբերություններով եւ ակտիվ քաղաքացիական հասարակությամբ: ԼՂՀ-ում մի քանի անգամ նախագահական եւ խորհրդարանական ընտրություններ են տեղի ունեցել, որոնք միջազգային դիտորդների կողմից գնահատվել են որպես ազատ եւ արդար:

Նշենք, որ ավելի վաղ նման բանաձեւեր են ընդունվել ԱՄՆ Մասաչուսեթս եւ Ռոդ Այլենդի նահանգների կողմից:

Հայաստանի առաջին օմբուդսմեն. Մարադայի սպանող դարաբաղյան պատերազմի ամենասարսափելի էջերից մեկն էր



Ապրիլ 10, 2013

Լեռնային Ղարաբաղի Մարադա գյուղում ադրբեջանցիների իրականացրած սպանող բարոնուհի Քերոլայն Քոքսն անվանում էր ժամանակակից Գողգոթա: Այդ մասին ապրիլի 10-ին կայացած մամուլի ասուլիսում հայտարարել է Հայաստանի առաջին օմբուդսմեն Լարիսա Ալավերդյանը:

«1992թ. ապրիլի 10-ին Մարադայում տեղի ունեցած սպանող այդ տարիների ամենասարսափելի էջերից էր: Այն բանից հետո, երբ Հայաստանը 1992թ. դարձավ ԵԱՀԿ եւ ՄԱԿ անդամ, մենք հույսեր ունեինք, որ խաղաղություն կտիրի, կավարտվի ռազմական իարվիճակը», - նշել է Լարիսա Ալավերդյանը՝ հավելելով, որ հայկական կողմի բոլոր ակնկալիքները հոդս ցնդեցին:

«Մարադայի իրադարձությունները անպաշտպան մարդկանց սպանող է: Ընդ որում, այդպես կոչված Մարադա գյուղը բաղկացած էր երկու գյուղերից՝ Լենինավան եւ Մարգուշավան: Մարադան, ի տարբերություն լեռներում գտնվող գյուղերի, անպաշտպան էր», - նշել է Ալավերդյանը:

Նա նշել է, թե ռազմական գործողությունների ժամանակ գյուղը 5 հազար բնակչություն ուներ: «Նրանք, ովքեր մնացել էին գյուղում, դաժանաբար սպանվել էին, 59 մարդու զերեւարել էին, նրանցից 19-ին այդպես էլ չվերադարձրին մեզ: 40 մարդ վերադարձավ

գերությունից, եւ դա միակ լուսավոր կետն էր», - ասել է Ալավերդյանը:

Նշենք, որ իրավապաշտպան կազմակերպությունների եւ հայկական աղբյուրների տվյալներով, ադրբեջանական զինված խմբավորումների կողմից Մարադայում սպանվել էր տարբեր գնահատականներով՝ 50-ից 100 մարդ:

Արեւմտյան Հայաստան

Դերսիմում առաջին անգամ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակն են հարգել

Ապրիլ 26, 2013



Թուրքիայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման միջոցառումներն այս տարի ընդգրկեցին նաեւ Դերսիմը (Թունջելի):

Թուրքական CNNturk-ի փոխանցմամբ՝ ապրիլի 24-ին, Թունջելիի Հանրապետության հրապարակում Դերսիմի հայերի միության կողմից կազմակերպվել է Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցին նվիրված միջոցառում, որի ժամանակ միության ղեկավարներից Սերքան Մարըթաշը ելույթով է հանդես եկել: Նա նշել է, որ Դերսիմում իրենց մանկությունն անցել է Դերսիմի բնիկ ժողովուրդների՝ հայերի եւ ալեւիների ցեղասպանության մասին պատմություններ լսելով:

Հայոց ցեղասպանության հիշատակման օրը Դերսիմի կենտրոնում գտնվող փաստաբանական գրասենյակի վրա սեւ ժապավեն է կախված եղել: Գրասենյակի փաստաբաններից Ինան Յըլմազը հայտնել է, որ ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության տարելիցն է, դրա համար էլ պատուհաններից սեւ ժապավեն են կախել:

Նշենք, որ Թուրքիայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակման արարողություններ են տեղի ունեցել մի շարք քաղաքներում, այդ թվում Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում, Մալաթիայում, Ադանայում, Բողրումում եւ Դիարբեքիրում:

Թուրքիայում Հայոց ցեղասպանության հիշատակման արարողության ժամանակ միջադեպ է տեղի ունեցել

Ապրիլ 25, 2013



Թուրքիայի Իզմիր քաղաքում, ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված սգո միջոցառման ժամանակ միջադեպ է տեղի ունեցել:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Իզմիրի Բասմահանեի հրապարակում հավաքվածները հարգանքի տուրք են մատուցել 1915-ին զոհված հայերի հիշատակին եւ մոմ վառել: Այդ ընթացքում հրապարակ մտած «Ժողովրդի փրկություն» կուսակցության մի խումբ անդամներ սկսել են հավաքվածների կողմ նետել դրոշների փայտերը եւ ջրի պաստմասե շշեր: Սգո միջոցառման մասնակիցները պատասխանել են իրենց վրա հարձակվողներին:

Մոտակայքում հերթապահող ոստիկանության ուժերն անմիջապես կանխել են բախման հետագա զարգացումը եւ ոստիկանական ուժերով կենդանի պատնեշ ստեղծել 2 խմբերի միջև: Միջոցառումից հետո խմբերն առանց միջադեպի ցրվել են:

Նշենք, որ «Ժողովրդի փրկություն» կոչվող կուսակցության անդամները փորձել են Ստամբուլի Թաքսիմի հրապարակում եւս սաղրանքներ իրականացնել, սակայն ոստիկանությունը թույլ չի տվել:

AFP. Հարյուր տարի անց հայերը պայքարում են Թուրքիայում իրենց գոյության համար

Ապրիլ 25, 2013

NEWS.am-ը որոշակի կրճատումներով ներկայացնում է France-Presse (AFP) գործակալության հոդվածը, որը հրապարակվել է ֆրանսիական «Libération» պարբերականում.

Թուրքիայի արեւելքում գտնվող Դերսիմի լեռներում բնակվող իսլամացած հայերը հարյուր տարվա ընթացքում լռություն են պահպանում՝ հետապնդումներից խուսափելու համար: Մակայն ումանք որոշել են բացահայտ հայտարարել իրենց գոյության մասին՝ ապրիլի 24-ին հիշելով իրենց նախնիների ցեղասպանության մասին:

Դանաբուրան գյուղից ութսունամյա Թահիրե Ալանպենչեսին իր ժլատ հիշողություններն է հավաքում 1915թ. ողբերգական իրադարձությունների մասին. «Մայրս պատմել է, որ իր ընտանիքը տեղահանվել է: Նա այդ ժամանակ երեխա է եղել: Տատը ցանկացել է նրան խեղդել գետում, որպեսզի չտառապի, սկայն չի արել: Մայրս ասում էր, որ ավելի լավ կլիներ, եթե նետեր գետը, քանի որ չէր ապրի այն ամենը, ինչ ստիպված է եղել ապրել»:



Հարյուր հազարավոր հայեր են զոհվել Առաջին համաշխարհային տարիներին Թուրքիայում զանգվածային կոտորածների ժամանակ: Հայերը նշում են մեկուկես միլիոն թիվը, բայց Անկարան կատեգորիկ կերպով ժխտում է:

Մակայն ումանք շարունակում են գոյությունը իրենց հողի վրա, բայց, ինչպես Թահիրե տատը, զոհելով իրենց լեզուն եւ կրոնը: «Մենք հայեր ենք, սակայն մահամեղականներ: Իմ պապ Բեդրոսն է իսլամացել, քանի որ այլընտանք չի ունեցել», -ասում է 79-ամյա Իբրահիմ Բոզթաշը:

Հետապնդումներից խուսափելու համար Բեդրոսի ժառանգներն ամուսնական կապեր են հաստատել քրդական կլանի հետ, որոնց հետ նրանք կիսում են ոչ մեծ Ալանյազի գյուղը: Մակայն նրանք երբեք չեն ձուլվել: «Մենք մեզ հայ ենք զգում, եւ ցանկացած պահի նրանք մեզ այդ մասին հիշեցնում են: Կարելուր չէ, քանի աղջիկ ենք նրանց կնության տվել եւ քանիսին ենք վերցրել, նրանք շարունակում են ասել, որ մենք հայեր ենք», -ասում է Իբրահիմի եղբայրներից 86-ամյա Խդիր Բոզթաշը:

Ընտանիքը խտրականության օրինակների պակաս չունի, որոնց ենթարկվել է իր ծագման պատճառով. հողերի զավթում, բանակում տղամարդկանց նկատմամբ ստորացուցիչ վերահսկողություն՝ ստոգելու համար թլպատված են, թե ոչ, եւ անգամ ընտանքի անդամներից մեկի նկատմամբ խոշտանգում:

Այս ամենը շատ հայերի ստիպել է ընտրել լռությունը: «Դերսիմի բոլոր գյուղերում կան հայեր, սակայն նրանց մի մասը թաքցնում է ազգային պատկանելությունը», -ասում է Իբրահիմի որդին՝ 42-ամյա Մուստաֆա Բոզթաշը:

Ամեն դեպքում նրանք որոշել են հայտնել իրեց ծագման մասին: Բնակվելով Իզմիրում՝ Մուստաֆան իր

շինարարական ընկերությունը «Բեդրոս» է անվանել՝ որպեսզի «շարունակի ապրել իր պապի անունը»: Նա հայտարարեց, որ պատրաստ է մասնակցել Թունջեղի քաղաքում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառմանը՝ Թուրքիայի հայերին խրախուսելու «պաշտպանել իրենց գոյությունը»: Դա նաև միջոցառման կազմակերպիչների՝ Դերսիմի հայերի ասոցիացիայի նպատակն է:

Հայոց ցեղասպանության մասին պնդումը դեռևս տաբու է Թուրքիայում: Մինչ այժմ միայն Ստամբուլում եւ Դիարբեքիրում են 1915 թ. կոտորածի զոհերի հիշատակի միջոցառումներ տեղի ունեցել:

Անիի Փրկչի եկեղեցու վերանորոգումը կավարտվի 2014-ի վերջին. թուրք պաշտոնյա



Հայոց Բագրատունի թագավորական դինաստիայի օրոք Հայաստանի մայրաքաղաք հանդիսացած Անիում Փրկչի եկեղեցու ամրացման կիսատ մնացած աշխատանքները շարունակվելու են: Այս մասին թուրքական «Անադոլու» գործակալության հետ հարցազրույցում հայտնել է Կարս նահանգի մշակույթի եւ տուրիզմի վարչության տնօրեն Հաքան Դոդանայը:

Հաքան Դոդանայի խոսքով՝ Անիի Փրկչի եկեղեցին տարածքում գտնվող կանգուն մնացած 21 արժեքներից մեկն է: Նա նշել է, որ 33 մետր եւ 33 սմ բարձրություն ունեցող եկեղեցին քրիստոնյաների կողմից սուրբ է համարվում: «Եկեղեցին 1954-ին կայծակի հարվածից 2 մասի է բաժանվել: Հուշարձանների համաշխարհային հիմնադրամի եւ Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարության կողմից ընթանում է եկեղեցու ամրացման եւ պահպանման աշխատանքներ:

Կայծակի հետեւանքով թափված քարերը հաշվառվում են եւ կրկին տեղադրվելու են իրենց տեղերում: Նախատեսում ենք, որ եկեղեցու վերանորոգման աշխատանքները կավարտվեն 2014-ի 11-րդ ամսում», - ասել է Հաքան Դոդանայը:

Էրդողանը քրդական հարցի լուծման հանձնաժողովում հայի է ընդգրկել



Ապրիլ 03, 2013


Թուրքիայում քրդական հարցի կարգավորման շրջանակներում թուրքական իշխանությունների կողմից ստեղծվել է «Իմաստունների հանձնաժողով», որի կազմի մեջ է հայտնվել նաև ստամբուլահայ լրագրող Էթյեն Մահչուփյանը:

Թուրքական T24.com կայքը հրապարակել է թուրքական իշխանությունների կողմից կազմած «Իմաստունների հանձնաժողով»-ում գտնվող անձանց անունները:

Հանձնաժողովում գտնվում են 63 հոգի: Իր հերթին ամբողջ Թուրքիան բաժանվել է 7 շրջանի եւ ամեն շրջանում բնակչության հետ աշխատելու համար առանձնացվել են 9 հոգի: «Իմաստունների հանձնաժողովում» են գտնվում Թուրքիայում հայտնի մտավորականներ, արվեստագետներ, երգիչներ եւ լրագրողներ:

Թուրքիայի հարավ-արեւելյան քրդաբնակ շրջաններում աշխատող հանձնաժողովի խմբի մեջ է ընդգրկվել Zaman պարբերականի լրագրող Էթյեն Մահչուփյանը:

Թուրք պաշտոնյան խոստովանել է, որ Կարսի Առաքելոց եկեղեցին 4 անգամ մզկիթի են վերածել



Հունվար 19, 2013

Կարսի մշակույթի եւ տուրիզմի նահանգային կառույցի ղեկավար Հաքան Դոդանայը հայտնել է, թե Կարս այցելող զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում գտնվող եկեղեցին պատմության ընթացքում 4 անգամ վերածվել է մզկիթի:

Թուրքական T24.com կայքի փոխանցմամբ՝ Հաքան Դողանայը, չնշելով «հայ» կամ «Հայաստան» անունը, շեշտել է, թե 937 թվականին Բագրատունիների կառուցած եւ 12 առաքյալներին նվիրված եկեղեցին այժմ որպէս գմբեթավոր մզկիթ է օգտագործվում:

Թուրք պաշտոնյան նշել է, թե եկեղեցի պատմության ընթացքում 4 անգամ վերածվել է մզկիթի:

Նշենք, որ հայոց Բագրատունիների օրոք, 10-րդ դարում կառուցված Կարսի Առաքելոց եկեղեցին պատմության ընթացքում ժամանակ առ ժամանակ եկեղեցուց վերածվել է մզկիթի: Վերջին վերանորոգումից հետո էլ խռակցություն կար, թե այն կարող է դառնալ եկեղեցի կամ թանգարան, սակայն այն ի վերջո, վերածվեց մզկիթի, չնայած պատերի վրա առկա են քանդակված խաչեր եւ առաքյալների պատկերները:

Թուրքիայի եւ Հայաստանի սահմանին տեղի ունեցած վթարի հետեւանքով թուրք զինճառայողներ են զոհվել

Ապրիլ 09, 2013 | 12:32

Ապրիլի 8-ին Թուրքիայի եւ Հայաստանի սահմանի մոտ վթար է տեղի ունեցել, որի հետեւանքով տուժել են թուրք զինճառայողներ, նրանցից երկուսը զոհվել են: Այսօր՝ ապրիլի 9-ին, մահացել են վթարի հետեւանքով վիրավորված յոթ զինվորներից եւս երկու հոգի:

Ինչպէս հաղորդել է Դոգան գործակալությունը, նախօրեին բեռնատար մեքենան բախվել է պարեկային միկրոավտոբուսին, որի արդյունքում վիրավորվել են յոթ զինվորներ: Պատահարը տեղի է ունեցել թուրքական արեւելյան Իզդիր նահանգի Դիլուջու սահմանային անցակետի մոտակայքում: Բեռնատարի վարորդը ձերբակալվել է: Վիրավորներից երկուսը մահացել են վթարից մի քանի ժամ հետո:

Թուրքիայում եւս մեկ հայկական եկեղեցի կվերանորոգվի եւ կդառնա թանգարան



Մարտ 28, 2013

Թուրքիայի Սիվաս (Սվազ) նահանգի Գյուրոն քաղաքում գտնվող կիսավեր Սուրբ Աստվածածին եկեղեցին

վերանորոգվելու է եւ դառնալու է թանգարան: Այս մասին հայտնել է Գյուրոնի քաղաքապետ Մեհմեդ Աքթաշը:

Ինչպէս տեղեկացնում է Hyetert-ը, Գյուրոնի քաղաքապետ Մեհմեդ Աքթաշը նշել է, թե իրենք մեծ տեղ են տալիս պատմական կառույցների վերանորոգմանն ու դրանք տուրիզմի նպատակով օգտագործելուն՝ շեշտելով, թե այդ շրջանակներում ոտքի են կանգնեցնելու Փընարօնու թաղամասում գտնվող հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցին:

Թուրք քաղաքապետի խոսքով՝ հայկական եկեղեցու վերանորոգման նախագիծը հաստատվել է Սիվասի մշակութային ունեցվածքի պահպանության խորհրդի կողմից եւ առաջիկայում տեղեր կհայտարարվի՝ վերանորոգման աշխատանքների համար:

Նա նշել է, թե Գյուրոնի քաղաքապետարանի եւ Սիվասի նահանգապետարանի համատեղ աշխատանքների արդյունքում վերանորոգվելիք հայկական եկեղեցին վերածվելու է թանգարանի, որտեղ նաեւ մշակութային միջոցառումներ տեղի կունենան:

Թուրքիայում հերթական եկեղեցին են վերածում մզկիթի



Ապրիլ 15, 2013 | 18:26

Թուրքիայի Տրապիզոն քաղաքում գտնվող Սուրբ Սոֆիա եկեղեցին, որը գործում էր որպէս թանգարան, շուտով կվերածվի մզկիթի:

Թուրքական Hurriyet-ի փոխանցմամբ՝ Տրապիզոնի նահանգապետ Վեյսել Չաքըն հայտարարել է, թե Տրապիզոնի Սուրբ Սոֆիա եկեղեցին մզկիթի վերածելու վերջին գործընթացն է տեղի ունենում եւ մնում է միայն այնտեղ իմամ նշանակելը:

Նշվում է, որ մզկիթի վերածվելուց հետո եկեղեցուն նամազի ժամերին ծածկվելու են եկեղեցու սրբապատկերները:

Տրապիզոնի Սուրբ Սոֆիա ուղղափառ եկեղեցին կառուցվել է 1250-1260 թվականներին:

1964 թվականից այն գործում է որպէս թանգարան:

Թուրքիայում կրկին գործ են հարուցել հայտնի լեզվաբան և գործարար Սևան Նշանյանի դեմ



05 Մարտի 2013

Թուրքական դատախազությունը գործ է հարուցել հայտնի լեզվաբան, գործարար Սևան Նշանյանի դեմ: Այս մասին տեղեկացնում է թուրքական «Անադոլու» գործակալությունը:

Ստամբուլի հանրապետական դատախազությունը հայազգի գործչի նկատմամբ գործ է հարուցել՝ Մուհամեդ մարգարեին վիրավորելու մեղադրանքով: Մասնավորապես, գործ հարուցելու համար հիմք է հանդիսացել Նշանյանի՝ իր անձնական կայքում Մուհամեդի վերաբերյալ գրված կարծիքը, որը թուրք իրավապահները «վիրավորական» են համարել: Նշվում է, որ Նշանյանի դեմ այդ գրության համար բողոք է ներկայացրել 15 քաղաքացի: Մեղադրող կողմը Նշանյանի համար պահանջում է 9 ամից մինչև 1,5 տարվա ազատազրկում: Առաջիկայում հայազգի մտավորականին կկանչեն դատարան: Նշենք, որ սա առաջին դեպքը չէ, երբ Նշանյանը խնդիրներ է ունենում թուրքական արդարադատության համակարգի հետ: Մինչ վերջերս նա լուրջ խնդիրներ ուներ Շիրինջ բնակավայրում պատմական տները վերանորոգելու և այն հանգստյան գոտու վերածելու իր ծրագրի հետ. թուրքական իշխանությունները Նշանյանի տները համարում էին ապօրինի շինություններ և ցանկանում քանդել դրանք: HayNews.am

Թաքցրել են հայ լինելու քանի որ Թուրքիայում սրիկաներ կան. Արա Գյուլեր

Ապրիլ 27, 2013

Ստամբուլահայ հայտնի լուսանկարիչ, «Դարի լավագույն լուսանկարիչ» ճանաչված Արա Գյուլերը հայտնել է, որ ժամանակին կեղծանուն է օգտագործել, քանի որ անհանգստացել է իր անվտանգության համար: Թուրքական Haberturk պարբերականի լրագրող Էվրիմ Էվրե Չոլաքօղլուի հետ հարցազրույցում հայտնի լուսանկարիչ Արա Գյուլերը պատմել է, որ ժամանակին «Յենի Իթթանբուլ» պարբերականում ստիպված է եղել տպագրվել «Ալի Բիսան Այգուն» կեղծանունով: Այն հարցին, թե ինչու է իր իրական անունը թաքցրել, Գյուլերը պատասխանել է. «Սա տարօրինակ երկիր է: Սրիկաններ կան: Թեեւ այստեղ ես տեղացի եմ»:

Խոսելով իր ծնողների մասին, Արա Գյուլերը պատմել է, որ ծնվել է մտավորականի ընտանիքում: Նա նշել է, որ հայրը եղել է հայտնի դեղագործ եւ իրեն ուսումի է ուղարկել ամենահայտնի ուսումնական հաստատություններում՝ շեշտելով, որ դրա շնորհիվ տիրապետում է անգլերենին, ֆրանսերենին, հայերենին եւ թուրքերենին:



Նշենք, որ Նշենք, որ «Դարի լավագույն լուսանկարիչ» ճանաչված Արա Գյուլերը, ում նաեւ անվանում են «Ստամբուլի աչք», ծնվել է 1928-ին Ստամբուլում: 1950-ին սկսել է լրագրողական գործունեությունը Yeni Istanbul պարբերականում:

Արա Գյուլերը ստացել է բազմաթիվ մրցանակներ եւ տիտղոսներ թե՛ Թուրքիայում, թե՛ աշխարհի ամենահայտնի կազմակերպությունների կողմից: Իրականացրել է ֆոտոռեպորտաժներ համաշխարհային պատմության հայտնի դեմքերի, այդ թվում՝ Ուինսթոն Չերչիլի, Առնոլդ Թոյնբիի, Բերթրանդ Ռասելի, Պիկասոյի, Սալվադոր Դալիի եւ այլոց հետ:

Արա Գյուլերը Սոֆի Լորենին անկողնում է լուսանկարել. հարցազրույց

Ապրիլ 27, 2013

Ստամբուլահայ աշխարհահռչակ լուսանկարիչ Արա Գյուլերը թուրքական Haberturk-ի հետ զրույցում պատմել է, թե ինչպես է Սոֆի Լորենին անկողնում լուսանկարել եւ թե ինչպես է Պիկասոն իր համար նկարել: Haberturk-ի այն հարցին, թե Արա Գյուլերը Կաննի կինոփառատոնը 10 տարի լուսանկարելու ընթացքում ինչ հետաքրքիր դեպքի է հանդիպել, հայ լուսանկարիչը պատմել է. «Մի անգամ տեսա, որ նա վերելակ է նստում, եւ շտապեցի նրա հետեւից: Միասին վերեւ բարձրացանք: Նա հոգնած էր, հանեց կոշիկները եւ պառկեց մահճակալին: Հարցրեցի, թե կարող եմ նրան այդ դիրքով լուսանկարել, նա դրական պատասխանեց: Նկարեցի եւ ուղարկեցի լուսանկարները մեր թերթին, որտեղ իմ իմ արած լուսանկարները տպագրվեցին «Արա Գյուլերը՝ Սոֆի Լորենի ննջարանում» վերնագրով»: Արա Գյուլերը պատմել է, որ Չարլի Չապլինին լուսանկարելու համար տանջվել է մեկ շաբաթ, սակայն

Չապլինն այդ ժամանակ առողջական լուրջ խնդիրներ ուներ եւ խնդրել է այդ տեսքով չլուսանկարել:



Ստամբուլիայ լուսանկարիչը պատմել է նաեւ իր եւ Պիկասոյի հանդիպման մասին. «Երբ Պիկասոյի հետ հանդիպեցին, ինքն ինձ շատ էր հավանել: Նա ասաց. «Դու ինձ այդքան շատ լուսանկարում ես, սպասիր ես էլ քեզ նկարեմ»: Հիմա Թուրքիայում Պիկասոյի մեկ օրիգինալ կտավ կա՝ իմ տանը»:

Նշենք, որ «Դարի լավագույն լուսանկարիչ» ճանաչված Արա Գյուլերը, ում նաեւ անվանում են «Ստամբուլի աչք», ծնվել է 1928-ին Ստամբուլում: 1950-ին սկսել է լրագրողական գործունեությունը Yeni İstanbul պարբերականում:

Արա Գյուլերը ստացել է բազմաթիվ մրցանակներ եւ տիտղոսներ թե՛ Թուրքիայում, թե՛ աշխարհի ամենահայտնի կազմակերպությունների կողմից: Իրականացրել է ֆոտոռեպորտաժներ համաշխարհային պատմության հայտնի դեմքերի, այդ թվում՝ Ուինսթոն Չերչիլի, Առնոլդ Թոյնբիի, Բերթրանդ Ռասելի, Պիկասոյի, Սալվադոր Դալիի եւ այլոց հետ:

Միջազգային

Թուրքիայի տարբեր քաղաքներում տեղի կունենան Տեղասպանության զոհերի հիշատակման միջոցառումներ

Ապրիլ 24, 2013

Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցին նվիրված սգո միջոցառումներ են նախատեսված իրականացնել Թուրքիայի Իզմիր, Դիարբեքիր, Բաթման, Ադանա եւ այլ քաղաքներում:

Ստամբուլի Թաքսիմ հրապարակում ապրիլի 24-ին, 19:15-ին տեղի կունենա «Հարգում ենք Տեղասպանության զոհերի հիշատակը» խորագրով սգո միջոցառում, որի ժամանակ կընթերցվի կոչ՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը: Այդ միջոցառմանն առաջին անգամ Եվրոպայից ժամանած տարբեր գործիչներ կմասնակցեն:

Ստամբուլի թուրքական եւ իսլամական ստեղծագործությունների թանգարանի մոտ, որտեղ 1915-ին մինչ մահվան ուղարկվելը պահվել էին ձերբակալված հայ մտավորականները, ապրիլի 24-ին, 12:30-ին կլինի Տեղասպանության հետ կապված հայտարարություն,

հատուկ ցուցատախտակի վրա կներկայացվի ցեղասպանության ժամանակ երկրի երեսից ջնջված 2300 հայկական գյուղերի անունները, այնուհետ միջոցառման մասնակիցները կայցելեն 2011 թվականի ապրիլի 24-ին թուրք զինծառայակցի կողմից սպանված ստամբուլահայ Սեւակ Շահին Բալըքչըի գերեզման:

Առաջին անգամ Դերսիմում (Թունջելի) տեղի կունենա Տեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառում: Միջոցառումը տեղի ունենա Սեյիթ Ռեզայի հարձանի մոտ:

Իզմիրում, 18:00-ին տարբեր հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ հիշատակի միջոցառում է կազմակերպվելու Բասմահանեյում:

Դիարբեքիրում քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության կողմից կազմակերպված սգո միջոցառումը սկսվելու է 12:00-ին: Այնուհետ մասնակիցները երթ են անելու:

Ադանայում եւս առաջին անգամ սգո միջոցառում տեղի կունենա: Ադանայի կենտրոնական բանկի դիմաց 13:00-ին տեղի կունենա միջոցառում, որի ժամանակ հայտարարություն կարվի:

Սգո միջոցառումներ տեղի կունենան նաեւ Բաթման, Անկարա եւ Բողրում քաղաքներում:

Ստամբուլում հարգել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, մոմ վառել եւ մեխակներ դրել

Ապրիլ 25, 2013



Ստամբուլի Թաքսիմի հրապարակում ապրիլի 24-ին, 19:15-ին սկսվել է Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցին նվիրված սգո միջոցառումը, որին մասնակցել են հարյուրավոր մարդիկ:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ի փոխանցմամբ՝ Ստամբուլի Թաքսիմի հրապարակում հավաքված հարյուրավոր մասնակիցներ հարգանքի տուրք են մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, մոմ վառել եւ մեխակներ դրել 1915-ի ապրիլի 24-ին մահվան ուղարկված հայ մտավորականների եւ քաղաքական գործիչների լուսանկարներին:

Սգո միջոցառման ժամանակ ելույթով հանդես է եկել թուրք հայտնի պրոֆ. Գենջայ Գյուրսոյը՝ դատապարտելով 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը 2013 թ. էջ 11

նությունը: «1915-ի ապրիլի 24-ին Ստամբուլում 240 հայի են ձերբակալել, որոնց թիվը մի քանի օրում հասել է 2 հազար 345-ի: Այդ ձերբակալություններն ուղղված են հայ հասարակությանը զրկել ուղեղներից: Այդ պատճառով ապրիլի 24-ը համարվում է Հայոց ցեղասպանության սկիզբը:



20-րդ դարի առաջին ցեղասպանությունն այս հողերում է տեղի ունեցել: Ավերվել են թալանվել են հայերի եկեղեցիները, դպրոցները եւ տները», -նշել է Գյուրսայրը՝ շեշտելով, թե չնայած 98 տարի անցել է, դեռ շարունակվում է հայերի հանդեպ թշնամությունը: Նա հիշեցրել է, որ 2007-ին սպանվեց Հրանտ Դինքը, իսկ 2011-ին՝ Սեւակ Շահին Բալըքչըն, սակայն նրանց սպանողներն ու սպանության կազմակերպիչներն ազատ են:

Այն պահին, երբ Թաքսիմում Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված սգո միջոցառումն էր, Թաքսիմի մի հատվածում բողոքի ակցիա էին իրականացնում «Ժողովրդի փրկություն» կուսակցության մոտ 20 անդամ՝ հայտարարելով, թե Հայոց ցեղասպանությունը իմպերիալիստների հորինած սուտն է:

Նշենք, որ ապրիլի 24-ին, Թուրքիայի մի շարք քաղաքներում տեղի են ունեցել Հայոց ցեղասպանությանը նվիրված սգո միջոցառումներ եւ կոնֆերանսներ:

Թուրքերը փորձել են ձախողել հայերի ակցիան Կանադայում

Ապրիլ 25, 2013

Կանադայում Թուրքիայի դեսպանատան առջեւ ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի ամենամյա արարողությունն այս տարի հանդիպել է 50 թուրքերի հակընդդեմ ակցիային, որոնք ժխտում էին ցեղասպանության փաստը: Թուրքերի խումբը սկսել է երգել եւ վանկարկել հայերի դիմաց: Այդ մասին հայտնում է Կանադայի Հայկական երիտասարդական դաշնությունը:

Ի լրումն այդ ամոթալի ակցիայի, թուրքերը փորձել են բախում սաղրել հայերի հետ, որ ձախողեն ամենամյա ակցիան: Հայերի հասցեին վիրավորանքներ են հնչել: Հայ ցուցարարները որոշել են արհամարհել թուրքերի

վանկարկումները եւ իրենց ուշադրությունը կենտրոնացրել են Թուրքիայի դեսպանատան վրա:



Ներկա ոստիկաններին հարցրել են՝ արդյոք թուրքերը ակցիայի թույլտվություն ունեն, ի պատասխան նշվել է, որ թուրքական խումբն այգում խորված անելու հայտ էր ներկայացրել: Դրանից հետո Թուրքիայի դեսպան Թունջալ Բաբալին թուրք սաղրիչներին հրավիրել է դեսպանատուն: Նշենք, որ դեսպանը վերջերս հայտարարել էր, թե Թուրքիան սահմանափակելու է տնտեսական գործակցությունը Կանադայի հետ, եթե այդ երկրի կառավարությունը չփոխի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցի շուրջ:

NEWSmaker. Մադրիդում հայ համայնքը բողոքի ակցիա է անցկացրել Թուրքիայի դեսպանատան առջեւ

Ապրիլ 25, 2013



Ապրիլի 24-ին Իսպանիայի Թագավորության Մադրիդ քաղաքում, Թուրքիայի հանրապետության դեսպանատան առջեւ, հայ համայնքի կողմից անցկացվել է բողոքի ակցիա՝ նվիրված Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակին: Այս մասին NEWS.am-ին տեղեկացրեց ընթերցողը, ով նաեւ տրամադրել է լուսանկարները:

Ոգեկոչման միջոցառումն ուղեկցվել է մոմավառությամբ: Դուրսի հնչյունների ներքո, ազգությամբ իսպանացի պատմաբանի կողմից ընթերցվել է Ցեղասպանության ճանաչման կոչ-նամակը:

ԵՆԽՎ անդամները կոչ են արել ճանաչել Հայոց ցեղասպանությունը

Ապրիլ 25, 2013



Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) մի շարք անդամներ համատեղ հռչակագիր են ստորագրել կոչ անելով ճանաչել 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը եւ նշել, որ դա կնպաստի Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը:

ԵՆԽՎ անդամների հռչակագրում, մասնավորապես, ասվում է. «Ցեղասպանությունների ճանաչումը մի ակտ է, որը նպաստում է մարդկային արժանապատվության հարգանքին ու մարդկության հանդեպ հանցագործությունները կանխելուն:

Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության փաստը վավերացված, ընդունված եւ հաստատված է եղել լրատվամիջոցներում ու ակնատեսների վկայությունների, օրենքների, ՄԱԿ-ի, Եվրախորհրդի եւ Եվրոպական Միության անդամ պետությունների խորհրդարանների, այդ թվում նաեւ Շվեդիայի, Լիտվայի, Գերմանիայի, Լեհաստանի, Նիդեռլանդների, Սլովակիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Հունաստանի, Կիպրոսի, Ռուսաստանի, ինչպես նաեւ ԱՄՆ ներկայացուցիչների պալատի եւ ԱՄՆ 43 նահանգների, Չիլիի, Արգենտինայի, Վենեսուելայի, Կանադայի, Ուրուգվայի ու Լիբանանի խորհրդարանների կողմից ընդունված բանաձեւերի ու հայտարարությունների ձեւով:

Խորհրդարանական վեհաժողովի ներքոստորագրյալ անդամները կոչ են անում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բոլոր անդամներին 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում հայերի եւ մյուս քրիստոնյաների նկատմամբ իրագործված ցեղասպանությունը ճանաչելու անհրաժեշտ միջոցներ կիրառել, ինչը կնպաստի մարդկության դեմ այդ զգվելի հանցագործությունը թուրքական իշխանությունների

կողմից ճանաչելու հնարավոր ակցիային, եւ որպես հետեւանք կհանգեցնի Հայաստանի ու Թուրքիայի միջեւ հարաբերությունների կարգավորմանը՝ դրանով իսկ նպաստելով տարածաշրջանային խաղաղությանը, անվտանգությանն ու կայունությանը»:

Նշենք, որ ապրիլի 24-ին ողջ աշխարհում նշվել է Օսմանյան կայսրությունում 1915 թվականին կատարված եւ 1,5 միլիոն մարդու կյանք տարած Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցը: Թուրքիան մինչ օրս ժխտում է մարդկության դեմ կատարած այդ հանցագործությունը:

Թուրք հրապարակախոսը պաշտպանել է հայերին եւ աղբբեջանցի դիվանագետին մեղադրել ազգային թշնամանք հրահրելու մեջ

Ապրիլ 10, 2013 | 22:43



Թուրքիայում Radikal թերթի աշխատակից Դենիզ Ջեյրեքը Ադրբեջանի դեսպանության ներկայացուցիչ Էլսեյար Սալմանովին մեղադրել է ազգային թշնամանք հրահրելու մեջ:

